Թ. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԱԹ 7 ՅՈՒԼԻՍ 1904—ՎԱՆԱՅ — ԹԻՒ 52

ԳԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . . 6 «

ՍԵՐՍԱՍԱՆՄԱՆ

Երեք թիւ մէկ Տարով
Տարեկան . . . 14 Ֆր
Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60
Վեցամսեայ 1. 50 Տոլար «

ԿԱՆԽԻԿ

Ծանուցման գին
20 սանթիմ

# ԻՐԱՒՈՒՆՔ

## ԼՐԱԳԻՐ

## ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԱԹ Ի ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal
Ir..vounk"
VARNA (Bulgarie)

Рѳдакция
на вѣстникъ
Иравунк"
ВАРНА

Գրութիւնք առ չեն տրուիր

## ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

Յարգուած ռուս պատմագրի մը գործէն արտատպուած և մեր նախորդ թիւով վերջացած ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ էջին իբր լրացուցիչ մաս Բաւմգարտէն կարտատպենք ՆԵՐՍԷՍ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (Աշտարակեցի) հոյակապ կեանքին հետեւեալ ճշդիւր պատմութիւնը։

ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ի անունը արդէն բաւական է ամէն հայու հետաքրքրութիւնը շարժելու դէպի այս պատմութիւնը որուն կը յատկացնենք այսօրուընէ սկսեալ Իրաւունք ի բանասիրականի բաժինը։

## ՀԱՅԿԱԿԱՆ

Կ. Պոլսէն հեռագ. «Պէրլ. Թակէպլատի»

Հակառակ Մակեդոնիոյ կացութեան դեսպանները և կառավարութիւնը ներկայիս հայկական հարցով կըզբաղին։ Կը խօսուի թէ այս պահուս Կ. Պոլսոյ մէջ հայ յեղափոխական դաղանի պատուիրակներ կը գտնուին, և կը վախցուի որ չըլլայ թէ, հակառակ խիստ հսկողութեան, պայթուցիկ նիւթեր ներս մըտցուած ըլլան։ կենթադրուի ոճրի մը պատահականութիւնը նոյն իսկ Կ. Պոլսոյ մէջ։ Կը հաստատուի թէ այն ապառնական նամակները, որոնք ոստիկանութեան կը վերագրուէին, Հնչակեան մասնախումբի գործն են։

Կ. Պոլիս 13 յուլիս

Մուշի առաջնորդ Գնէլ վարդապետ, որ առողջութեան համար Պոլիս կուգար արձակուրդով, Տրապիզոնի մէջ վար դրուեցաւ։ Կ'երևի թէ այս արգելքը եղած է, անկարելիութեան մէջ դնելու յիշեալ եկեղեցականը ուևէ շփում ունենալու օտարերկրեայ դեսպանաց հետ։

Կ. Պոլիս 14 յուլիս

Դուռը պատասխանեց Օրմանեան պատրիարքին վերջին բողոքագրին նամակով մը՝ որուն մէջ Մուշի և Սասունի վերջին դէպքերուն պատասխանատուութիւնը Հայերուն վրայ կը բեռցուներ, ամէն գործուած բռնութիւնները անոնց կը վերագրէ և ի վեր կը հանէ քաղաքային և զինուորական իշխանութեանց ուղիղ(՞)վարմունքը, և կառավարման գործադիր իշխանութիւնները յանցանք վերագրելը անհաճոյն կը գտնէ այն անձնուիրութեան հետ զոր պատրիարքը պարտի ունենալ դէպի գահը և դէպի երկիրը։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՒԷՐ

Թաղակ ան Խորհուրդս Ներկայիս կը փութայ հրաւիրել քաղաքիս արդոյ Հայ հասարակութիւնը, յառաջիկայ կիրակէ, 11 Յուլիս, ի ժամ 10 առաւօտեան, առ ի խորհրդակցութիւն ի սառեւ նշանակեալ կարեւոր խնդրոց։

Ա. Շինութիւն Ս. եկեղեցւոյ չրջաբակին։

Բ. Նորոգութիւն Աղջկանց վարժարանին

Գ. Կարգադրութիւնք ազգ. երկոտ վարժարանաց նոր տարեշրջանի համար։

Լիայոյս եմք որ քաղաքիս պատուարժան աղգայիններն պիտի փութան անձամբ պատասխանել հրաւէրս ներկայ գտնուելով նոյն օրը որոշեալ ժամուն։ յԱզգ. խորհրդարան.

Ի Դիմաց Թաղ. Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ
Ն. Գ. Բէստանեան Խ. Ագնուսը.

## ՍԵՐՊԻԱ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Քանի մը ամիսներէ ի վեր դիւանագէտներու և համաշխարհային մամուլին ուշադրութեան առարկայ եղած է Պուլկարիոյ և Սերպիոյ միջև բարեկամութեան հեղհեղուկ սերտացումը։

Օպրէնովիչներու Սերպիոյ գահէն եղերական բաժանումը՝ երկու դրացի և հարազատ ազգերու մէջ կարծես Սլիվնիցայի եղբայրասպանութեան կրկնումը ընդմիշտ տրգիլելու համար եղած ըլլար։ Նիշի մէջ Պուլկարիոյ իշխանին և Բէլթր թագաւորին տեսակցութիւնը՝ իրենց ներքին և արտաքին գործոց նախարարներով, նաև ի մասոյ Սոֆիայի մէջ Բէլթր թագաւորին ըլալիք ընդունելութիւնը ցոյց կուտան թէ երկու կառավարութիւնները սերտօրէն մտերմացած են արդէն։

Իսկ երբ անդրադառնանք երկու ազգերու ներկայ յարաբերութեան հոն եղբայրակցական զգացումները աւելի վառ և աւելի ոգևորուած կը գտնենք։ Հարիւրաւոր ուսանողներու երկու մայրաքաղաքները փոխադարձ այցելութիւնը ու գոյացած համաձայնութիւնները՝ որոնց մանրամասնութիւնները պէտք է յիշեն Իրաւունք ի ընթերցողները, ցոյց տուին թէ Պուլկար և Սերպ ժողովուրդի գլխաւոր բաղձանքն է դաշնակցութիւն մը կնքել թէ ներքնապէս ուժեղանալու և թէ Մակեդոնիոյ Սլաւ տարրին տանելի կեանք մը ապահովելու համար։

Այո՛ Մակեդոնիոյ մասին երկու երկիրներու մէջ զգացումներու նոյնացած լինելը ապացուցուեցաւ վերջին տարուոյն Պէլգրատի մէջ տեղի ունեցած մեծ միթինգով, ուր Մակեդոնիոյ պուլկար ապստամբներուն ջերմ համակրութիւն յայտնուեցաւ, ինչ որ չէր տեսնուած մինչև այդ օրը, երբ Օպրէնովիչները կը գահակալէին։ Ժողովրդական այդ եղբայրակցական ցոյցերը քաջալերութիւն եղան երկու վեհապետներուն որ իրենց յարաբերութեան աւելի մտերմական գոյն մը տան և տնտեսական, մաքսային ու թղթատարական բացառիկ համաձայնութիւններէ սկսելով, մօտ ապագայի մէջ հասնին քաղաքական և վերջապէս զինուորական համաձայնութիւններու—զինակցութեան։

Պալգանի սա երկու փոքր պետութիւններն ա՛լ զգացած ըլլալ կը թուին թէ իրենց երկու մեծ դրացիներու, Աւստրիոյ և Ռուսիոյ պաշտպանութեան ապաւինելը օր մը չէ օր մը իրենց շատ սուղի պիտի նստի։

Վտանգաւոր պաշտպանի մը քմահաճոյքին համակերպելու ստորնացուցիչ վիճակէն դուրս ելլելու յարմարագոյն առիթը ներկայացաւ Ծայր. Արևելքի ներկոյ պատերազմով

Սոֆիայի ու Պէլգրատի մէջ յղացուած խ ձեռնարկուած համաձայնութիւնը կեդրոնաձիգ ուժ մը պիտի ըլլայ կ'ըսուի Հոն-Սերպիոյ, Մակեդոնիոյ, Մոնթէնէկրոյի, Տալմատիայի, Պոսնայի, Հէրսէկի, Խրուատիայի, Սլաւոնիայի և Հարաւային Հունգարիոյ բոլոր սլաւ տարրերը իրար բերելու, որոնց համագումարը քսան միլիոն կը հաշուի։ Պալքանեան սլաւներու մերձեցման այս հաւանականութիւնը բաւական հին առեղծ ի վեր Աւստրիոյ և Ռուսիոյ մտահոգութիւն կը պատճառէ։ Եւ ճիշդ ասոր համար այդ երկու մեծ պետութիւնները Պալգանի սրաթիւ-քօն պահպանելու և որչափ կարելի է փոքր պետութիւններու միջև գժտութեան խնձորը անպակաս ընելու աշխատած են ու կաշխատին մինչև այսօր։ 1897 ի Աւստրօ-ռուս համաձայնութիւնը արտաքնապէս եթէ խաղաղութիւնը պահպանելու համար էր, ներքնապէս աւելի փոքր ազգերու մէջ գժտութիւնը յաւերժացնելու նպատակ ունէր։ մանաւանդ Ռուսիոյ այս ներքին նպատակը Պուլկարները աւելի՝ որոշ տեսան երկու տարի առաջ Սքիւպի եկեղեցական խնդրով, խնդիր մը որ իրար մօտենալ սկսող պուլկար և սերպ ազգերը յանկարծ իրարու թշնամացնելու բնոյթը ունէր Ռուսիոյ դերակատարութեամբ։

Բայց այլևս մեծերու ներքին դիտումները Պալգանի փոքր սլաւ տարրերը հակցած ըլլալով, քաղաքական մէկէ աւելի նպաստաւոր հանգամանքներու շնորհիւ իրենց մէջ մերձեցումը արագաբար յառաջ կը տանին։ Սոֆիայէ Պէլգրատ և հոնկէ Զէթինէ այսօր դիւանագիտական պաշ-

տանեաներ ու պատուիրակներու յաճախակի երթեւեկութիւնը կապացուցանէ թէ քաղաքական մերձակայ յեղաշրջումի մը առջև կը գտնուինք, և այս յեղաշրջումը հաւանականաբար պաշտպանութիւն պիտի գտնէ անդլո ֆրանդօ-իտալական երրեակէն։

# ԹՈՒՐՔ ԲԱՆՏԸ

ՄԵՐՍԻՆ ի բանտին մէջ եղեռնական տխուր դէպք մը տեղի ունեցաւ վերջերս։— Երեք տարի առաջ՝ Հաճընցի Բարսեղ անուն քաջ եւ սիրելի երիտասարդ մը՝ իրրեւ մարդասպան զրպարտուելով՝ տեղւոյն Եղեռնադատ ատեանէն դատապարտուեցաւ։ Բայց այս երիտասարդին անմեղութիւնը յոյս կը ներշնչէր թէ վճռաբեկ ատեանէն անպարտ պիտի հռչակուէր։

Բանտին մէջ անոր ներկայութիւնը՝ մտած օրէն իսկ՝ օրհնութիւն մը եղած էր իր ազգակիցներուն համար անխտիր։ Անիկա հովանաւոր ու երկնառաք պահապանն էր բանտին մէջ իսկ հալածուած հայերուն, ու բանտը այլեւս պալատի մը փոխուած էր այդ խեղճ ու կրակ արարածներուն համար։ Թուրքերու նովոլական «Անա՛գ կեամուր» ը այլեւս չէր հնչեր Հայոց ականջներուն։ Բոլոր բանտարկեալներն ալ մանաւոր ակնածանք մը ունէին դէպի խրոխտ կարիճը։ Բանտապահներն իսկ առերեւոյթս քաղաքավարդիմեամբ կը խօսէին իրեն հետ։ Վա՛յ այն թուրքին որ կը յանդգնէր անարգել իր Հայ բանտակիցները։ Հայու կատրին», Հաճընցի կեավուրին այս անվեհերութիւնն ու քաջութիւնը անտանելի էր դարձած ցած հոգի բանտապետներուն, որոնք կը ղողային իրմէ ու չէին համարձակեր իրեն հակառակիլ։ Ուրիշ կերպ այլեւս կարելի չէր ընել եւ հաւաքաբար անոր կեանքին դէմ դաւադրելու ստորնացումին իջան վատերը։ Բայց Բարսեղ որչափ յանգուգն, այնչափ ալ ազատ էր։ Կը դիտէր անոնց դաւը եւ կը գուշակէր ամէն բան։ Քանի մը անգամ անոնց երեսն ի վեր գարկած էր դաւադրութիւնին եւ կշտամբած զիրենք։ Կուսակալի փոխանորդին ի մացուցած էր անոնց դաւը՝ յայտնելով միայնգամայն թէ բանտապետները թիւրք բանտարկեալներուն դաշոյն եւ վնցհարուածման կը բաշխեն գաղտնի։ թէ այս գրութեամբ հայ բանտարկեալներու կեանքը վտանգի մէջ է։ ... Բայց ի զո՞ւր որո՞ւ հոգն է կեանքը։

Ապրիլ 4, կիրակի օր, ժամը 3 ի սահմանները, Բարսեղ՝ Տարսոնցի Կարապետ անուն բանտարկեալի մը հետ թղթախաղով զբաղած միջոցին՝ յանկարծ դաշոյնի երկու հարուածներու անմեղ զոհերը կը դառնան թէ ինք եւ թէ ընկերը։ Երկուքը միասին արեան մէջ գալարուելով՝ անողոք մահուան կը դիմագրաւեն։ Ամբողջ բանտարկեալները՝ խելայեղ իրարանցումի մէջ՝ դղրդացնող աղաղակներ ու ողբախառն կոռում-գոչումներ կը բարձրացրնեն։ Ոստիկանութիւնը կը միջամտէ եւ «խաղաղութիւնը կը վերահաստատուի»(·) ...

Իսկոյն ցկեանս բանտարկուած երկու թուրք բանտարկեալներ փոխ կուսակալին ի սեւ կը հանուին։ Կուսակալին փոխանորդը՝ իբր թէ տեղի ունեցայ եղեռնադործութիւնէն յուզուած կը հրամայէ քննութեան ենթարկել բանտապետները։ Բանտը կը խուզարկուի ու 40 դաշոյն եւ 6 հատ վնցհարուածման կը գտնուի։

Այսպիսի տեղ մը, որ Եւրոպացիներով լեցուն է, այս տեսակ քաջութիւնի ոճիրներ կը կատարուին։ Ու՞ր կը մնայ Հայաստանի խոր անկիւնները, ուր ոճրագործ ձեռքը աղատօրէն կը շարժի։

Մինչեւ այսօր ոճրագործները անպատիժ կը մնան։

ՀՆՉԱԿ

# ՅՈՒՆԱՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ

Բարաչկէվա անունով Բնիկ Վառնացի Յոյն մը իր երիտասարդութեան սուեն պանդիտութեան ելլելով. Ռուսիոյ մէջ յայտնած է պատկառելի հարստութեան մը տիրանալ։ Իր ծերութեան հասակին, ասկէ 30–40 տարի առաջ, իր ծննդավայրը յիշելով կատկագիր մը կը պատրաստէ, օրինաւորութեան սահմանին մէջ, ու կառուցանել կուտայ այս քաղաքի մէջ հոյակապ քարաշէն եկեղեցի մը, վարժարան մը եւ հիւանդանոց մը, եւ այս հաստատութեանց համար կը յատկացնէ բաւականաչափ գումար մը, դրամատան մը յանձնուած, որուն տոկոսովը մինչեւ ցարդ կը պահուին այդ հաստատութիւնները Յունաց առաջնորդարանի վերին հսկողութեան տակ։ Հիւանդանոցը ունի իր մասնաւոր հոգաբարձութիւնը երեք անդամներէ բաղկացեալ, որոնց մին կտակարարին ազգականներէն մը, իսկ երկուքը Յունաց առաջնորդարանի միջոցաւ կընտրուին։ Հիւանդանոցին կանոնաւորութիւնը ու մաքրութիւնը գերազանց է տեղական ուրիշ նոյնանման հաստատութիւններու բաղդատմամբ. իսկ հիւանդ ընդունելու մասին բնաւ ազգի խտրութիւն չէ եղած ցարդ։

Տեղական պուլկար կառավարութիւնը, կամ աւելի ճիշդը քաղաքապետութիւնը վերջին օրերս ուզեց այդ Հիւանդանոցին ոստնձգութիւն ընել, օգտուելով կտակին այն թերի կողմէն թէ այդ հաստատութիւնը պիտի պատկանի «Վառնայի քրիստոնեաներուն։» Քաղաքապետութիւնը կը պնդէ թէ քանի որ յոյնը պուլկարի անուն չէ յիշուած կտակին մէջ, պէտք է բոլոր քրիստոնեայ վառնացիները մասնակցին հոգաբարձուներու ընտրութեան։ Եւ այս նպատակաւ անցեալ օր քուէարկութիւն կատարուեցաւ քաղաքապետութեան միջոցաւ. բայց քաղաքացի հասարակութիւնը խստիւ բողոքեց եւ հեռագիրներով դիմեց Իշխանին, եւ ուր որ տակ էր։

Կ'իմանանք թէ այդ բողոքներուն իբր արդիւնք պատասխան եկած է Սոֆիայէ թէ առայժմ հիւանդանոցը առջի վիճակին մէջ ձգուի։

Այս խնդրոյ համար Յոյներու կողմէ Սոֆիա ղրկուած՝ էֆտօք. Բանթոյոն փաստաբանը։

Պուլկար ազգին ու կառավարութեան համար մեր համակրանքը սրտայայտած ենք միշտ, բայց այս խնդրոյ մէջ առնուած քայլը համակրելի բլլալէ հեռու է։ Քաղաքապետութիւնը, եթէ միջոցներ ունի, լաւագոյն բրած՝ պիտի՝ բլլայ՝ եթէ իր քաղաքային մեծ հիւանդանոցին քիչ մը աւելի խնամք տանի։

# ԱՑԼ ԵՒ ԱՑԼՔ

Բօրթ Արթուրի մէջ մեծ անհանդստութիւն կը տիրէ Շօ անուանեալ Զինացի երկրաչափի մը անհետացումին՝ պատճառաւ։ Շօ Եւրոպական գաստիարակութիւն ստացած ուշիմ եւ բարեկիրթ Զինացի մըն էր։ Երբ ոուսները գրաւեցին քաղաքը, անոր առաջարկեցին իրենց ծառայութեան մտնել։ Շօ ընդունեց, անոնց հաւատարիմ եւ իսկապէս օգտակար եղաւ։ Ուստեստ պաշար եւ ամէն բան կը հայթայթէր եւ իր մտաւոր հեղինակութեամբը աշխատակցեցաւ Բօթ-Արթուրի բոլոր շինութեանց, նա ժողովրդական յարգանք կը վայելէր եւ ընդունուած էր բարձր ակուքներու մէջ։ Շօ հարուստ ալ էր, միլիոն մը բուպլիէ աւելի կարողութիւն ունէր։

Բօրթ Արթուրի մօտ գտնուող ձկնոցէն ոչ հեռու նոյնսիսման հարիւրներով տուներ կառուցուած են. ընդարձակ քաղաքամաս մըն է այդ որ անոր սեփականութիւնը է եւ՝ զոր չինել տուած է չինացի գործաւորներու բնակութեան համար. անկէ մեծ հատոյթ կը ստանայ։ Շօ Բօրթ Արթուրը իր

# ՆԵՐՍԷՍ ԱՏՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ԲԱԶՄԱՎԷՊ հանդէսէ)

Ինչ որ լսած եմ Ներսէս Կաթողիկոսի բերանից իւր կեանքի եւ գործունէութեան մասին եւ ինչ որ ինքս գիտեմ անձամբ եւ շատ լաւ յիշում եմ, նշանակում եմ այս յուշատետրում, գիշանելով յարգելի անձանց յուշդրանքներին։

Ըստ ասութեան հանգուցեալ Ներսէս հայրս պիտի նա ծնուել է Աշտարակ գիւղում Ս. Թէոդորոսի տօնին եւ անուանել են նրան Թորոս. կնքահայրն եղել է Գալուստ եպիսկոպոսն։ Իւր հօր—տէր Յարութիւն քահանայի մահից յետոյ, Գալուստ եպիսկոպոսը մանուկ հասակում ընդունել է Թորոսին իւր խնամքի ներքոյ եւ տարել է Էջմիածին։ Մի քանի տարուց յետոյ նոն եպիսկոպոսը (Էջմիածնի աւագ լուսարար), զգալով իւր մօտակայ վախճանը՝ խնդրագրով աղերսում է Ղուկաս կաթողիկոսին որ զկնի իւր մահուան, ընդունի Թորոսին իւր խնամքի ներքոյ. եւ աղերսագիրը տալիս է Թորոսին, որ ինքը անձամբ ներկայացնի կաթողիկոսին։ Երբ Թորոսը ներկայացնում է աղերսագիրը կաթողիկոսը կարդում եւ ասում է նորան. «Անա պապիդ, որ ես նախ աղօթում եմ առ Աստուած պահել նորան պիտանի կիսնքը յօգուտ ս. Էջմիածնի. ապա աստուծոյ կամքն օրհնեալ լինի եթէ պապիդ մահ պատահի, նորա տեղ ես պապ կը լինիմ քեզ. թող միսիթար լինիք»։ Եւ իսկապէս Գալուստի մահից յետոյ կաթողիկոսը ընդունում է Թորոսին իւր մօտ վեհարանում։ Պատանին շատ վատառողջ եւ նիհար կազմուածք է ունեցել։ Պատմում էր Ներսէսը, թէ Դանիէլ եպիսկոպոսը (յետոյ կաթողիկոսը) մի օր պատահում է վեհարանում եւ տեսնում է նորա ձեռքում իմ Նարեկ աղօթագիրք, շատ գեղեցիկ կազմով, եւ ասում է վեհարանի սպասաւորներին. «Ափսոս է, որ այս գեղեցիկ գիրքը տուել էք սորա ձեռքը. սա շատ չի սպրի, գիրքը խարտպ կանի»։ Անցնում է մի քանի ժամանակ. Ղուկաս կաթողիկոսը կամենում է Դանիէլին նուիրակ ուղարկել Տաճկաստան եւ առաջարկում է նորան Թորոսին իւր հետ տանել, ասելով. «Դանիէլ սրբազան այս երեխային հետդ տար, գուցէ Աստուած յաջողի այնտեղ հմուտ բժիշկների հանդիպիք. եւ բժշկուի. սա չնորհալի է հոգիս վկայում է. որ սա ժամանակին պէտք կ'լինի էջմիածնին»։ Դանիէլն իւր կամքի հակառակ ստիպուած՝ համաձայնում է. Բայց Թորոսին խոժոռութեամբ է ընդունում։ Ասում է Ներսէսը թէ Զմիւռնիա գնալիս ինքը ճանապարհի շատ մասը ստով է գնացել եւ այդ է եղել նորա կազմուածքի կազդուրելու պատճառն. եւ երբ իրմիր են հասնում( բոլորովին առողջանում է։ Այնուհետեւ Դանիէլն սկսում է գութ տածել դէպ ի պատանին. եւ տեսնելով նորան սրամտութիւնը հոգս է անում նորա ուսման մասին։ Ցանձնում է նորան Թագաւոր վարժապետին, որից ուսանում է քերականութիւն եւ ճարտասանութիւն։ Այնուհետեւ Դանիէլը Թորոսին իւր հոգեզաւակ համարելով սիրում է նորան եւ հոգւով կապում է նորան հետ։ Ժամանակին ձեռնադրում է սրեղայ Ներսէս անուանագրութեամբ։ Դաւթ—Դանիէլեան կռիւների միջոցին Ներսէսի խաղացած դերը յօգուտ Դանիէլի յայտնի է։ Դանիէլի մահից յետոյ Էջմիածնի միաբանութիւնը ընտրում է Ներսէս եպիսկոպոսին վանքի գլխաւոր կառավարիչ։ Հրաժարեցրած Դաւթ կաթուղիկոսի մատնութեամբ Երեւանի սարդարը Ներսէսին բանտարկում է Երեւանի արուարձան Նորք գիւղում Թրդապահ Իսքանդանդուլի Բալաբէկ խանի հսկողութեան ներքոյ։ Պատմում էր Ներսէսը, թէ այս Իսքանդանդուլի խանը պատուում էր իրան շատ մարդասիրութեամբ, մինչեւ անգամ իմանալով, որ Ներսէսի սիրած կերակուրը փլաւն է՝ համարեա ամեն օր իւր տանից փըլաւ ուղարկելիս էին լինում։

Այդ միջոցում Թիֆլիզից դեսպանութեամբ շահի մօտ գնալիս է լինում իշխան Դեմետր Շամբակուրեան Օրբելեանին. եւ, իմանալով Ներսէսի բանտարկութիւնը, սարդարից թոյլտուութիւն է խնդրում Ներսէսին այցելելու բանտումը։ Սար-

գրպանին չափ լաւ կը ճանչնար, առնոր բոլոր անկիւնները եւ պաշտպանութեան ամուր ու տկար կողմերը գիտէր։ Ինչո՞ւ համար եւ ինչպէ՞ս ձգեցին որ անիկա մնայ։ Անտաւասիկ։ Պատերազմի բացուելուն գանի պաշտօնէ ու վարչական գործերէ հեռացուցին։ Պաշտօնեաները էական անոր նայիլ պարզ մահկանացուի աչքով։ ուստ գործաւորները այլեւս անոր չէին հնազանդէր։ Եւ այդ բոլորէն ազդուեցաւ եւ օրին մէջը փախաւ։ Մ՝ուր Իրիքալը ոչ ոք չը գիտեր։ անոր մասին աշ մէկ տեղեկութիւն կայ։ ոմանք կըսեն թէ տեսած են անոր քաղելով Բարի Արիւրէն դուրս ելլելը։ ուրիշներ կը պատմեն թէ առագաստաւոր նաւակ մը զանի թշնամի դիւաղաւոր մը տարաւ։ Բայց սա բնական կասկած չը վերցներ թէ Ճաթենիքպէտք եղածը ըրին թանկագին փախստականէ մը օգտուելու համար։

* *

—Զիքակոյի մէջ խիստ մեծ գործադուլ մը սկսաւ։ Ցիսուն հազար պաշտօնեաներ եւ սեւեսահղեններու գործաւորներ կը պահանջեն վարձքերու նոր կարգադրութիւն մը։

Միչիկանի մէջ վերջին գործադուլին հետեւանքէ գործէ արձակուած հասքի գործաւորները ուժանակով օրը հանեցին հանքերու տնօրէն Մ։ Ուլիմնի առուն։

—Շոգենաւային ընկերութիւնները մեծագոյն նաւը ունենալու համար սրցումի մէջ են։ Տասը օր առաջ աշխարհի էն մեծ նաւին ճամբայ ելնելու փորձի մասին կը խօսուէր. հիսակ կիմանանք թէ Պալթիկ ը աշխարհի մեծագոյն նաւը ըսուելու պատիւը երկար օրեր չպիտի վայելէ։ Տիւնարտ ընկերութիւնը խիստ մեծ նաւի մը շինութեանկը սկսի պիտի ունենայ 253մէթր երկայնութիւն, 29 մէթր լայնութիւն, 20 մէթր խորութիւն. Պալթիկի տարածութիւնն էր միայն 243 մէթր երկ. 25 մէթր լայն. եւ 17 մէթր խորութիւն։

Այդ նոր շինուելիք նաւը երկուք ու կէս տարիէն պիտի կրնայ շինուիլ եւ կը հաշուեն թէ առաջնակարգ զբոսանաւորէ մը աւելի սուղ պիտի նստի։

# ԱԶԳԱՑԻՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄ ի քննիչ կարգուած Տ. Գէորգ Ասլանեան առանց պաշտօնին ձեռնարկելու եւ առանց սպասել նախարարութեան հեռագրին ետ դարձած է։ այս առթիւ Բիւզանդիոն սա տողերը կը գրէ

Պաշտօնական հեռագիրներու այս փոխանակումէն կը հասկցուի որ Գէորգ էֆ. Ասլանեան Երուսաղէմ դընաց հաշուեքննիչ պատուիրակի պաշտօնն ընդունելով, որ արդէն հեռագրաւ իմաց տրուած էր իրեն ի Հալէպ եւ ի Պէրութ, բայց մէկ երկու օր Ս. քաղաքը մնալէն ետքը, միտքը փոխեց, կամ իրեն առաջարկուած պաշտօնին արդիւնաւոր ելք մը չկրցաւ նախատեսել եւ այնուհետեւ ոչ իսկ հոն մնալ ուզեց նոր ստիպումի կամ թախանձանքի առթիւ չառլու համար։

Այժմ Պատրիարքարանը ուրիշ քննիչ մը պիտի ընտրէ։ Տ. Կարապետ Խաչատուրեան արդէն հասած է Երուսաղէմ։

—ՊԱՊԱՏԱՂ ի ազգայինք քահանայ չունենալով, նորածին երախաները ուսմէն եկեղեցիին, մէջ մկրտել տալ սկսեր են, բայց զարմանալին այն է որ երբ հայ մը իր զաւակին ուրիշ հայ մը կնքահայր ընել կուզէ ռուսէն քահանան կը մերժէ, առարկելով թէ հայը ուղղափառ քրիստոնեայ չէ. եւ այս պարագային զաւակը մկրտել տըուղ չըլլալուն հայը գոնէ իր ազգային արժանապատուութիւնը վիրաւորուած զգալով, տղան չառներ քալեր։

ՄԱՍԻՍ լրագրի հիմնադիր Տ. Նորայր Ռիֆիւճեան անցեալ կիրակի գիշեր մեռած է և յուղարկաւորական պատշաճ հանդէսով մը թաղուած է Շիշլիի գերեզմանատունը։

Հանգուցեալը 1852 ին սկըսելով իր խմբագրական կեանքէ ամբողջ սերունդի մը ճշմարիտ դաստիարակը եղած է. նաեւ իրեն կը պարտինք մեր աշխարհաբար լեզուի կանոնաւորումը ու մաքրագործումը։

ԱՅՐՈՒԻԼ ծանուցուած գրադարան Տ. Աղեքսանդր Երիցեանի գրադարանն է, որ էջմիածին պիտի փոխադրուէր։ Այս կորուստը կը գնահատուի 50,000 ռուպլի։

—Փրովիտենսի մէջ յունիս 12 ին Հնչակեան ժողով մը տեղի ունենալով, մէկ քանի տեսնաբանութիւններ է անմիջապէս յետոյ, ինպատտ վեր. Հնչակեան կուսակցութեան հանդանակութեան մը ձեռնարկուած և 3050 տոլար հաւաքուած է։ Նոյն քաղաքի մէջ քանի մը ամիս առաջ ևս հանգանակութիւն մը եղած էր միևնոյն կուսակցութեան ի նպաստ և 2010 տոլար հաւաքուած էր։

Իսթ Սէնթ Լուիզի Հնչ. մասնաճիւղն ալ հրապարակային ժողովի մը մէջ հանգանակած է 309 տոլար և հանգանակութիւնը կը շարունակուի։

Նոյնպէս Լոբէնոն Հնչակ. մասնաճիւղը յունիս 19 ին հրապարակային ժողովով մը և Տ. Մ. Պարթեւեանի նախաձեռնութեամբ հանգանակած է 942 տոլար։

—Աղեքսանդրիոյ հայ երիտասարդութիւնը երախտագիտական հեռագիր մը ուղղած յունիսի 29 ին Մր. ՃԷյմս Պրայսի, որ նոյն օրը կը նախագահէր Լոնտոնի մէջ Հայաստանի համար գումարուած Միջազգային Համաժողովին։

## ԱԶԴ

Ֆիլիպէի Ազգ. Վարժարանին համար կը փնտռուին ուսուցիչ եւ ուսուցչուհի։

Փափաքողները անհրաժեշտ է որ դիմեն հոգաբարձութեան մինչեւ Յուլիս 8 սնձամբ կամ դրաւորապէս, ներկայացնելով իրենց վկայագիրները։

## ԾԱԽԱՒՈՒ ԳԻՐՔԵՐ

**ԹԻԱԳԱՐՏ** Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.
« Բ. « (433 էջ) 2 ֆր.
**ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ** կամ **ՄՐՄՈՒՆՋ ՀԱՅԿԱԿԱՆ** երկրորդ անգամ տպագրուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.
**ՆԻՏԱ** կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութենէն առաջ. Գին 50 սանթիմ
**ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁՈՀԵՐ** Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն։ Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել ՎԱՒՌՆԱ «Ի ր ա ւ ո ւ ն ք» ի խմբագրութեան

ՍՕՖԻԱ Տ. Օնիկ Գարսլեանի
ՊՈՒՐԻԷՇ Տ. Օնիկ Փափազեանի եւ Տ. Յ. Պիպէոճեանի
ԲՕՆԱԹԱՆՑԻ Տ. Սիսակ Մէլիքեանի
ԳԱՀԻՐԷ Տ. Կարապետ Էրզնկացեանի
ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ Տ. Ստեփան Մազմանեանի
ՈՒՍՏՐ (Ամերիկա) Տ. Յակոբ Ֆրանգեանի
ՊՕՍԹՈՆ Տ. Ա. Ասքանազի
ՓՐՈՎԻՏԷՆՍ Տ. Մ. Տէր Պողոսեանի
ՖԻՉՊՈՒՐԿ Տ. Կ. Մարութեանի

---

դարը համաձայնութիւն է տալիս միայն այն պայմանով, որ տեսակցութիւնը լինի Իսֆանդանդուլի խանի ներկայութեամբ եւ խօսակցութիւնը թուրքերէն լեզուով. որովհետեւ Դաւիթը մատնել էր Ներսէսին Պարսից զլխաւոր իշխանաւորներին իբրեւ զաղտնի գրագրութիւն ունեցողի Ռուսաց կառավարութեան հետ ի վնաս Պարսից կառավարութեան եւ սպասում են եղել Պարսից թագաժառանգ Աբբաս Միրզայի գալստեան, որ պիտի ինքը քննէր Ներսէսի վերայ տրուած Դաւիթի ամբաստանութիւնը։ Օրբելեանը յանձն է առնում տեսակցութիւնը Իսֆանդանդուլի խանի ներկայութեամբ եւ թուրքերէն լեզուով. իշխան Օրբելեանը խնդրում է Իսֆանդանդուլի խանին Ներսէսին պատուով եւ միութարեալ պահել։ Ներսէսը նորան շնորհակալութիւն է յայտնում Երեւանի Սարգարէց եւ ասաւել՝ Իսֆանդանդուլի խանից։ Անցնում է մի մէջոց. թագաժառանգ Աբբաս Միրզան գալիս է զօրքով եւ խորվիրապ վանքի դաշտում բանակ է դնում. Ներսէսին զինուորներով տանում են այնտեղ Շահզատայի հրամանով եւ առանձին վրանի մէջ պահակ զինուորների հսկողութեան ներքոյ պահպանում են մինչեւ որ շահզատայի հրամանը լինէր դատաստանի ներկայացնել նորան։ Մի քանի օրից յետոյ, Պարսից սովորութեան համաձայն, մուհտիկը կանչում է բարձր ձայնով. «Շահզատայի հրամանն է Ներսէս մահրասային տանել ներկայացնել շահզատայի դիւանին (դատաստանին)», եւ պահապան զինուորները տանում են նորան Աբբաս Միրզայի վրանը. իսկ նորա ծառան, աշտարակցի Պետրոսն, երբ տեսնում է, թէ Ներսէսին իբրեւ մահապարտ յանցաւոր տանում են շահզատայի վրանը, կարծելով թէ կախաղան պիտի հանեն, այնքան վախենում է, որ շուրթը պապատում է եւ արիւն գնում։ Իմ բարեկամ խաներն եւ իշխանաւորներն էլ, ասում էր Ներսէսը նոյնպիսի կարծիք ունէին. բայց ես ասուծուն ապաւինելով՝ անվեհեր սրտով գնացի։ Վրանում Աբբաս Միրզան զորքի վերայ ծայրապահակ նստած էր, Դաւիթ հրաժարեցուցած կսիողիկոսը ծնկան վերայ նստած, իսկ Երեւանի սարգարն եւ Դաւիթի կուսակցութեանը պատկանող մի քանի երեւելի խաներ ոտքի վերայ ձեռները սրանքերին դրած։ Ինձ ներկայացրին շահզատային. եւ խոնարհ գըլուխ իջեցրի ոտքի վերայ կանգնած։ Շահզատան խոժոռ եւ սպառնալի դէմքով դարձաւ դէպի ինձ եւ հարցրեց. «Դո՞ւ ես մահրասայ Ներսէսը։ Գլուխ իջեցրի եւ պատասխանեցի «Այո»։ «Դու, կամ մեր հպատակ հայերը մեր տէրութեան կառավարութիւնից ինչո՞վ անբաւական էք, որ ցանկանում էք Ռուսաց կառավարութեան հպատակ լինել. եւ դորա համար էլ դաղտնի գրագրութիւն ես շարունակում Ռուսաց կառավարութեան հետ ի վնաս մեր հզօր եւ բազմագութ տէրութեան»։ Ես անվհեր դէմքով խոնարհ գլուխ իջեցրի եւ ասացի «Շահզատան տպրած կենայ. իւր զարուրում (սուրբ դրքում), որն որ ձեր կրօնն էլ ընդունում է իբրեւ սուրբ գիրք (Ներսէսը թուրքերէն շատ ազատ վարժ խօսում էր) գրած է, թէ սիրտ թագաւորաց ի ձեռին Աստուծոյ է. այսօր աստուած պարգեւել է Ձեզ Պարսից հզօր տէրութեան թագաժառանգութիւնն. ունէք իշխանութիւն կեանքի եւ մահուան. ուստի աղաչում եմ Ձեր մեծութիւնը վերահասու լինել արդարութեան եւ ստուգել իմ վերայ բարդուած ամբաստանութիւններն. ո՞րտեղից գիտէք հաւատալ, կամ ո՞վ է մատնել ինձ Ձեր մեծութեանը, թէ ես դաւաճան եմ Ձեր հզօր եւ բարեխնամ տէրութեան եւ դաղտնի դրագրութիւն ունիմ Ռուսաց կառավարութեան հետ, թող ձեր արեգակնափայլ տէրութեան առաջ իմ երեսին ասեն եւ ապացուցանեն. ահա ձեր մեծութեան առաջ դատաստանի առաջ պատրաստ եմ պատասխանելու, եւ եթէ Աստուածակոյս կողմանէ քննելուց յետոյ ինձ մեղաւոր կը գտնէք, Ձեզ ի վերուստ շնորհեալ իշխանութեամբ ինձ խստութեամբ պատժեցէք, իսկ եթէ անմեղ կը լինեմ կաղաչեմ Ձեր մեծութիւնը ինձ զրպարտողին նոյն պատժին արժանացնէք»։

(Շարունակելի)

## ԹՈՒՐՔԻԱ

### ԷՐՄԷՆԻՍՏԱՆ

Սթանպոլսոյ էլչիներին էրմէնիստան իշխերի իւր մեշղուլ պուլընմալարը «Պ. Թակէպլաթտա պիլոիրիլիյոր - Սթանպոլսոյ էրմէնի գոմիթալար թարաֆընտան պիր հարէքէթ վուգուի մէմուլ օլընը ըմըշ։ Թէհլուքէ մէքթուպլարը նէշր իտէն Հնչակիսթլէր օլարը թէպէյիւն օլընմըշ։

—Մուշ առաջնորդը Տրապիզոնա նէթիշմիշ իսէաէ, հիւքիւմէթ անըն վաբօրա կիրմէսինէ միւսաատէ իթմէմիշ տիր։ զիրա մուհանիլէյին Սուշ գըր կընընտան սոլայը էճնէպիլէ է թաֆսիլաթ վէրէպիլէճէկի հիւքիւմէթին իշինէ էլ վերմէյոր։

—Պիթլիս վիլայէթինէ հիւքիւմէթի մահէլլէյէնին պի կիւնահ էրմէնիլէրէ գարշը իճրաի զուլմ իթմըսինէն սոլայը Պասրբարք յունիս 23 տէ Պապը Ալիյէ պիր թագրիր վերմիշ տիր։

Պապը Ալի Պասրիարքա պիր ճէվապնամէ հօղլայուպ, մուշ վէ Սասուն համխէլէրինէ էրմէնիլէրի մէսուլ կէսմէրմիշ վէ միւլքիյէ վէ ասքէրիյէ մէսուլարընը դարէքաթթը սահլ վէ գանունա միւթապըգ ատա խոտրէք, անլէրէ օրուրմ ալթ իթմէքլէ Պասրիարք վէկայիթիր սաալգանէսինի թէճավիզ իթմիշ օլըյոր տէմիշտիր։

Ալ. Ծայրանկա նէշր օլընան պիր պէնամ Պուլկարիա վէ Միւրքիա պէյնինտէ խուսուսէթ հուսուլա կէլէճէկինէ տայիր՝ փէս բրէնս Փէրանանտա պաղը պէյանաթ ալթ իթմիշ խոր։ Պուլկար թէլէկրաֆ աժանը մէգքիւր պէնտին միւնտէրէճաթընը քիւլլէն թէքզիպ իտէյօր։

—Մանասթիր շէհրինիշիմոն մէր քէղ իթթիխաղ իթմիշ օլան միւֆէթիշ Հիլմի բաշա վէ Տիճօրճիս էհալիտէն հէր կիւն եիւզլէրճէ իսթիտալար գապուլ իթմէքտէ տիրլէր։ պա խուսուս Տիճօրճիսէ թագտիմ օլընան արզուհալար իւէ էհալի իտարէի հաղբրէտէն թաճիզլիկինի վէ մէզալիմի նագէ իտուպ, ավն ու ինայէթ թազարրու իթմէքտէ տիր։ Պու իշթիքալարը թահգիր իթմէք իշին պիր գոմիսիոնը մախուս քէօյլէրէ կէօնտէրիլէճէք։ պա խուսուս եանմըշ վէ պօզուլմուշ օլան խանէլէրի թամիր ու ինչա վէ միւթէզարրուր էհալիյէ իանէ թէվզի օլընաճաղըր։

— Վիէննա 4 յուլիս— Զայրընալարը Մալիւմաթա նազարէն Աւստրիա հիւքիւմէթի միւէսսիր պիր նօթա իւէ Պապը Ալիտէն իսլահաթըն պիւլա թէէխիր իճրասընը թալէպ իթմիշ տիր։

—Գուանտվատան պիլտիրիլտիկի իւզրէ, օրայա եէնիտէն իւքի թապուր ասքէր կիթմիշ։ Ըսհանընն եէնիտին պաշ կէօսթէրէճէկի վէ Թիւրքլէրին թէքրար միւահիշ մէնզարէլէր աշճաղը պէքլէնիլմէքտէ իմիշ։

Օշրիա գազ սընտա գըթլըգ տէվամ իթմէքտէ։ Սթանտարտըն մուխպիրի քէօյլէրի կէզմէքտէ իրէն էհալի անը գարշըլայուպ «էքմէք, էքմէք» պաղըրմըշլար։ Պա գահէթվասէկեանա խանէթէն Ինկիլիթէրատան չուվալլար իւէ ուն կէթիրիլիպ թէվզի օրընճաղը մէմուլ օլընըյոր։

—Մանասթիր վիլայէթինտէ Արնավուտլար գուսուրմուշճասընա խրիսթիանլար գըրմագ լազմիյէթինտէ պուլընըրլար ըմըշ։ Ֆագաթ գոմիթալարը գօրգուսը անլէրին ճէսարէթինի գաթ իտէյօր ըմըշ։

ԱԹԱՆՊՈԼ 4 յուլիս— Բէտի մալիւմաթա իւզրէ, ապրիլ 13 տէն յունիս 2 է գատար՝ Մաքէթոնիա վէ Էտիրնէ վիլայէթէրինէ ավտէթ իտէն մուհաճիրլէրին մըգտարը 10886 քիշիյէ պալիզ օրմուշ տըր։

—Թիւրք մէհաֆիլինտէ զանն օլընադըր իւզրէ, շու սըրա խթիլա գալգըշան չէթալար՝ Եվրոպատա թէէսիր սահիպի օրան պ. ղը զէվաթըն թէչվիգի իւէ գալգըշըրլար ըմըշ։(*)

## ՄԱՍՀԱՐԷՊԷ

Քայ-Բինկին ճաբօնլըլարտան ֆէթհ օլընմասը ապապինտէ, Բուսլարա թէսէլլի իշին 30,000 ճաբօնլը գըրըմըշ տէյա չրգան հավատիս բէր միւպալաղ՝ լը օլտըղը թէպէյին օլընտը։

Պունտան իւքի կիւն ադտէր տախի Բօրթ Արթուրըն ֆէթհ օլընտըղընը պաղր կաղէթալար եաղտըրլար։ պա հավատիսին տախի պիր սէհվիյաթտան իւէրի կէլտիկի անլաշըլտը։ (Տէյլի Մէյլ) Նուչվանկըն ալընմասընը Բօրթ Արթուրա թահվիլ իթմիշ իտի։

Նուչվանկըն ֆէթհ օլընմասը իսէ՝ Թայզընը իշարը իւզրէ, Բուսլար Ժիվուչիի նամընտա քէնտի թօր վաբօրլարընը պաթըրտըգտան սօնրա չէհրի թէրք իտուպ կէրի չէքիլմէրի իւէ հուսուլա կէլմիշ։

—Նովիկ նամ սուրաթ վաբօրը Բօրթ Արթուրատան չրգուպ, ճաբօն վաբօրայընն արասընտան կէչէ էք Վլատիվոստոգա կիթմէկէ մուսաֆագ օրմուշ։

— Ժէնէրալ Քուրոքի 5 ֆըրգա ասքէրլէ շիմալա իլերլէմէքտէ տիր։ Բուսլարընն կէրի գաչաճագլարը եօլլարը քէսմէք իշին։

—«Բրէնս Հանրի» նամ ամէրիկա բոսթա վաբօրը Բուսլարատան թուրթուլուպ, տէրունինտէքի 55 բոսթա բաքէթլէրի միւռատէրէ օլընմըշ։

## ՐՈՒՍԻԱ

Եկիսաբէթուպոլընն սուրբէֆէսի Անարէէվ Յուլիս 4 ագշամընը գաթլ օլընը։ Ձինայէթ գալատալըդէլը պիր զոդագտա իճրա օլընմըշ։ գաթի Անատէվին սրրթընա 6 գուրշուն եէրլէշտիրմիշ վէ քէնտիսի գաչմըշ տիր։

—Զարընն Յուլիս 3 տէ Բէթէրհոֆա եէթիշմիկի Բէթէրպուրգատան պիլտիրիլմիշ տիր։

## ՍՕՆ ԹԷԼԷԿՐԱՖԻԱՐ

Լոնտոն 5 յուլիս

Ա. Բայթրընը ըն Թօքիոսան իշարը իւզրէ, ժէնէրալ Քուրոքինին պիր թէլէկրաֆընա պինանէն, տիւն սապահ իւքի ֆըրգա բուսա ասքէրլէրի գաթի իւմիւտ սուրէթտէ Մօթէն պօղազընա հիւճում իթմիշլէր, ֆագաթ կէրի սիւրիւլմիւշլէր։ Թէլէֆիսաթըն մըգտարը պիլինմէյօր։

—Բօրթ Արթուրտան բոսթա չանթասընը Զիֆույա նագլ իտէն պիր գայրգ ճաբօնլըլարտան թուրթուլտու։ Հարպիյէ եշլէրինէ այիտ օլան մէքթուպլարը սագլայուպ, խուսուսի օլանլարը մահէլլէրինէ եօլլարըլար։

—Բէթէրպուրգ 5 յուլիս— ժէնէրալ Քուրոքինին թէլէկրաֆը «Եանչէլին գազասընտա ժէնէրալ Քէլէրան ֆըրգասը ճաբօնլըլար պէյնինտէ չէտիտ պիր մուհարէպէ վուգու պուլտու։ իւք հիւճում իտէնլէր Բուսլար օրուպ, տիւշմանըն գուվվէթինի տէրք իտէրէք կէրի չէքիլտիլէր։ Ֆագաթ ճաբօնլըլար անլէրին իւզէրինէ հիւճում իթմէլէրինտէ, Բուսլար մէճպուրի մուգավէմէթ իթտիլէր։ 15 սաաթ ճէնկլէշտիքտէն սօնրա պինտէն զիյատե թէլէֆիսաթ վէրտիլէր։

—Բէթէրպուրգ յունիս 27— տէ ճաբօնլըլարը Բօրթ Արթուր իւզէրինէ ումումի պիր հիւճում իթմիշ օրմալարընա տայիր վէրիլէն հավատիս ճաբօնլըլարտան թաստէգ օլընմայօր։ Խուսուսի պիր հիւճումտա ճաբօնլըլար պէօյիւք թէլէֆիսաթլէ կէրի սիւրիւլմիշ էր։

— Բէթէրպուրգ— թէհրանտան ալընան մալիւմաթա իւզրէ գօրէլա բէք Հայրըմրշ։ Էվրուբալըլար չէհրի թէրք իտուպ, տապլարա չէքիլմիշլէր։ Պիր գաչ կիւն զարֆընտա 900 քիշի էօլմիւշ։

—Սթանպոլ 5 յուլիս —Ինկիլիզ կաղէթալարը Տիարպէքիրէ տէ մէնֆի պուլկարլարա տայիր վէրտիքլէրի հ. վատիս սահիհ տէկիլ տիր։ Կէչէն սէնէ 331 քիշի Տիարպէքիրէ սիւրիւլմէկէ մահքիմ օլմուշլար ըսը։ պունլարտան 5 ի խասթալըգ սէպէպի իւէ Սէլանիքտէ գալարլար։ 20 սի եօլտա, 48 քիշի գօրէլատան վէ 47 սի տէ Տիարպէքիրտէ էօլտիւլէր։ Սօն ամվը ումումիտէ 204 քիշի Էվրէբայա կէթիրիլուպ սէրպէսթ պըրագըլարլար։ եալընըզ 7 սի տինամիթ խթեմալ իթմիշ օրմալարը իշին Տիարպէքիրտէ գալարլար։

Սթանպոլ 5 յուլիս— Ճքօտրա վանէսի Հայտարարաշանընն Փորատալա կիթմէսի սինոր իւզէրինտէ միւնազասալը օլան արապիէր իշին իւքի հիւքիւմէթ պէյնինտէ պիր իթիլաֆ հուսուլա կէթիրմէք մագսէտինտէն իպարէթ տիր։

Պուլկար բոսթա վէ թէլէկրաֆ տիրէքթէօրը Մ. Սթօյանովիչ իւքի մէմալիք պէյնինտէ մուահէտէսի ագթ իթմէք իշին պու կիւն թիւրք մուրախասալարը իւէ միւղէքերէյէ պաշլատը։

Ահվա նայիլ օլան պուլկար բահիպլէրին վէ հօճալարընն մէմուրիյէթլէրինէ պաշլամալարընա միւսատ օլընմասընտան տոլայը էքսարք Սաորատամա իշթիքնա իթտի։

## ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ

Փողոց Զար Պօրիս
Հայ Աղջկանց վարժարանի կից

Վատահօրէն կը յայտարարեմ թէ ինձ դիմողները ըստ ամենայնի կարող եմ գոհացուցանել շնորհիւ իմ 32 տարուան փորձառութեան եւ արուեստին կատարելագործման համար ըրած զոհողութիւններուս։

Վասն յի յարգոյ հասարակութիւնը այդ հաստատելու համար թող հաճի անդամ մը լուսանկարչատունս այցելել եւ դիտել ի ցոյց տրուած գործերս։

Դիմելը չատ դիւրամատչելի են։

Լուսանկարիչ
Օ. ՄԵՍՐՈՎԸ

Одговорникъ А. Кръбетиянъ
печатница "Взаимность„ — Варна.